# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կաթնաջուր համայնք, գ. Կաթնաջուր
հեռ. 099-00-03-02

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<06>> ԱՊՐԻԼ 2020 ԹՎԱԿԱՆ N 07

ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020Թ-Ի ԱՊՐԻԼԻ 06-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով, Կաթնաջուր համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Կաթնաջուր համայնքի ավագանու 2020թ.-ի ապրիլի 06-ի նիստի օրակարգը

Օրակարգ

Կաթնաջուր համայնքի ավագանու 2020թ.-ի ապրիլի 06-ի նիստի

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի 2020թ.-ի բյուջեի 1-ին եռամսյակի կատարման վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումն ի գիտություն ընդունելու մասին
2. ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին
3. Համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին
4. ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի 2020թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին
5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի համայնքային սեփականություն համարվող գույքի օգտագործման տրամադրման պայմաններ սահմանելու մասին
6. ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի 2020 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային հայտեր ներկայացնելու մասին

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Աղազարյան Ջիվան | | | |
| Թորոսյան Մերուժան | | | |
| Ղազարյան Ազատ | | | |
| Ոսկանյան Մանվել | | | |
| Պապոյան Մանվել | | | |
| Սիմոնյան Գագիկ | | | |

Կաթնաջուր համայնքի ղեկավար՝ Արմեն Պապոյան

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կաթնաջուր համայնք, գ. Կաթնաջուր
հեռ. 099-00-03-02

Ո Ր Ո Շ Ու Մ

<<06>> ԱՊՐԻԼ 2020 ԹՎԱԿԱՆ N 08

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020թ.-ի ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38 հոդվածի 1-ին մասի 1 կետով և <<ՀՀ բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1 կետի պահանջներով.

Կաթնաջուր համայնքի ավագանին որոշում է

Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի հաղորդումը Կաթնաջուր համայնքի 2020թ.-ի բյուջեի 1-ին եռամսյակի կատարման մասին:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Աղազարյան Ջիվան | | | |
| Թորոսյան Մերուժան | | | |
| Ղազարյան Ազատ | | | |
| Ոսկանյան Մանվել | | | |
| Պապոյան Մանվել | | | |
| Սիմոնյան Գագիկ | | | |

Կաթնաջուր համայնքի ղեկավար ________ Արմեն Պապոյան
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կաթնաջուր համայնք, գ. Կաթնաջուր 13 փ. 1շ.
հեռ. 099-00-03-02

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«06» ԱՊՐԻԼ 2020 ԹՎԱԿԱՆ N 09-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 16-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Կաթնաջուր համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Աղազարյան Ջիվան | [signature] | | |
| Թորոսյան Մերուժան | [signature] | | |
| Ղազարյան Ազատ | [signature] | | |
| Ոսկանյան Մանվել | [signature] | | |
| Պապոյան Մանվել | [signature] | | |
| Սիմոնյան Գագիկ | [signature] | | |

Կաթնաջուր համայնքի ղեկավար՝ ____________ (ստորագրություն) Արմեն Պապոյան (անուն, ազգանուն)

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ 06801004

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի ավագանու
2020թվականի ապրիլի 06-ի N 09-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ-Ի ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Քրիստինե Մուշեղի Մխիթարյանին երեխայի ծննդյան կապակցությամբ հատկացնել օգնություն 20000 (քսան հազար) դրամի չափով
2. Ալվարդ Արտաշի Գրիգորյանին որպես նյութապես անապահով ընտանիքի անդամ հատկացնել օգնություն 50000 (հիսուն հազար) դրամի չափով

ԿԱԹՆԱՋՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ________________ Վ. Վարդանյան
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի**
**Կաթնաջուր համայնք, գ. Կաթնաջուր**
**հեռ. 099-00-03-02**

ՈՐՈՇՈՒՄ

<<06>> ԱՊՐԻԼ 2020 ԹՎԱԿԱՆ N 10

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԸ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76 հոդվածի 2, 3 և 4 կետերով և ՀՀ Կառավարության 28.10.2010թվականի թիվ 1477-Ն որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Կաթնաջուր համայնքի ավագանին որոշում է

1. Տալ համաձայնություն, Կաթնաջուր համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերը՝ ՀՀ Կառավարության 28.10.2010թվականի թիվ 1477-Ն որոշմամբ սահմանված կարգով մինչև մեկ տարի ժամկետով առանց մրցույթի համայնքի ղեկավարի կողմից համայնքի արոտօգտագործողների հետ արոտավայրերից օգտվելու պայմանագիր կնքելուն:
2. Արոտավայրերից օգտվելու վճարի չափը սահմանել տվյալ հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Աղազարյան Ջիվան | | | |
| Թորոսյան Մերուժան | | | |
| Ղազարյան Ազատ | | | |
| Ոսկանյան Մանվել | | | |
| Պապոյան Մանվել | | | |
| Սիմոնյան Գագիկ | | | |

Կաթնաջուր համայնքի ղեկավար՝ ____________ (ստորագրություն) Արմեն Պապոյան (անուն, ազգանուն)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կաթնաջուր համայնք, գ. Կաթնաջուր
հեռ. 099-00-03-02

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<06>> ԱՊՐԻԼ 2020 ԹՎԱԿԱՆ N 11-Ն

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով և 33-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Կաթնաջուր համայնքի ավագանին որոշում է.

1. Կաթնաջուր համայնքի ավագանու 2019թ.-ի դեկտեմբերի 27-ի թիվ 37-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հատվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Աղազարյան Ջիվան | | | |
| Թորոսյան Մերուժան | | | |
| Ղազարյան Ազատ | | | |
| Ոսկանյան Մանվել | | | |
| Պապոյան Մանվել | | | |
| Սիմոնյան Գագիկ | | | |

Կաթնաջուր համայնքի ղեկավար՝ ______________ Արմեն Պապոյան
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ Կ. ԿԱԹՆԱՋՈՒՐ ... 06801004

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կաթնաջուր համայնք, գ. Կաթնաջուր
հեռ. 099-00-03-02

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<06>> ԱՊՐԻԼ 2020 ԹՎԱԿԱՆ N 12

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲԵԼՈՌՈՒՍ 82.1 ՄԱԿՆԻՇԻ ՏՐԱԿՏՈՐՈՎ ԿԱՐՏՈՖԻԼԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով.

Կաթնաջուր համայնքի ավագանին որոշում է.

ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի համայնքային սեփականություն համարվող Բելոռուս 82.1 մակնիշի տրակտորով կարտոֆիլի արտադրության գյուղատնտեսական աշխատանքների սակագին սահմանել.

1. ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի 1 հա կարտոֆիլի ցանքի աշխատանքների համար 25000 (քսանհինգ հազար) դրամ
2. . ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի վարչական տարածքից դուրս գտնվող հողերի 1 հա կարտոֆիլի ցանքի աշխատանքների համար 35000 (երեսունհինգ հազար) դրամ
3. ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի 1 հա կարտոֆիլի մշակության համար 25000 (քսանհինգ հազար) դրամ
4. ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի վարչական տարածքից դուրս գտնվող հողերի 1 հա կարտոֆիլի մշակության համար 35000 (երեսունհինգ հազար) դրամ
5. ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի 1 հա կարտոֆիլի բերքահավաքի աշխատանքների համար 40000 (քառասուն հազար) դրամ

6. ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի վարչական տարածքից դուրս գտնվող հողերի 1 հա կարտոֆիլի բերքահավաքի աշխատանքների համար 60000 (վաթսուն հազար) դրամ
7. Վարձակալության տրամադրման աշխատանքների կատարման համար մեխանիզատորի աշխատավարձ սահմանել սահմանված վարձավճարի 30%-ի չափով,
8. Աշխատանքների կատարման հսկողությունը դնել Կաթնաջրի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Ա. Նիկողոսյանի վրա:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Աղազարյան Ջիվան | | | |
| Թորոսյան Մերուժան | | | |
| Ղազարյան Ազատ | | | |
| Ոսկանյան Մանվել | | | |
| Պապոյան Մանվել | | | |
| Սիմոնյան Գագիկ | | | |

Կաթնաջուր համայնքի ղեկավար՝ ______________ Արմեն Պապոյան

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔ * 06801004 *

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կաթնաջուր համայնք, գ. Կաթնաջուր
հեռ. 099-00-03-02

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<06>> ՄԱՐՏ 2020 ԹՎԱԿԱՆ N 13

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով և հաշվի առնելով Կաթնաջուր համայնքի ղեկավարի առաջարկությունը Կաթնաջուր համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Կաթնաջուր համայնքի ղեկավարին ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2020 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային երկու հայտ ներկայացնելու և դրանց իրականացման համար համայնքի կողմից կատարվելիք ներդրումները Կաթնաջուր համայնքի 2020թ.-ի բյուջեից կատարելու համար.

ա) Ծրագիր 1. <<ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի գերեզմանատան ճանապարհի ասֆալտապատման աշխատանքներ>>, համայնքի բյուջեից ներդրումը՝ 12000000 (տասերկու միլիոն) ՀՀ դրամ:

բ) Ծրագիր 2. <<ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի փողոցների գիշերային լուսավորության համակարգը սնուցող մոնոբյուրեղային տեսակի 15կվտ/ժ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի և էներգախնայող լեդ տեսակի լուսատուներով հենասյուների կառուցում>>, համայնքի բյուջեից ներդրումը՝ 6000000 (վեց միլիոն) ՀՀ դրամ:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Աղազարյան Ջիվան | [signature] | | |
| Թորոսյան Մերուժան | [signature] | | |
| Ղազարյան Ազատ | [signature] | | |
| Ոսկանյան Մանվել | [signature] | | |
| Պապոյան Մանվել | [signature] | | |
| Սիմոնյան Գագիկ | [signature] | | |

Կաթնաջուր համայնքի ղեկավար՝ [signature] Արմեն Պապոյան
(ստորագրություն) (անուն, ազգանուն)